# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 550-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«  » _____ 2025 թվականի N _____ - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N 550-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 16.2-րդ հոդվածի 7.1-ին մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի «Ոստիկանության, զինված ուժերի, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, փրկարարական ծառայության, քննչական կոմիտեում ծառայության, դատախազության, էկոպարեկային ծառայության, արտաքին հետախուզության ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանելու մասին» N 550-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

- վերնագիրը, հավելվածի վերնագիրը «ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերից հետո լրացնել «, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ» բառերով, իսկ 1-ին կետը «արտաքին հետախուզության ծառայության» բառերից հետո լրացնել «, պետական պահպանության ծառայության» բառերով.
- որոշման նախաբանը «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի 17-րդ

հոդվածի 3-րդ մասի» բառերից հետո լրացնել «, «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի 16.2-րդ հոդվածի 7.1-ին մասի» բառերով.

- հավելվածը 11-րդ սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ սյունակով.

Պետական պահպանության ծառայության պաշտոններ
12
Ծառայության պետի տեղակալ

(բարձրագույն խումբ)
Բաժնի պետ և նրան հավասարեցված պաշտոններ

(գլխավոր խումբ)
Բաժանմունքի պետ (ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում) և նրան հավաս

(գլխավոր խումբ)

Բաժնի պետի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ

(ավագ խումբ)
Բաժանմունքի պետի տեղակալ (ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում), բաժ
կառուցվածքային ստորաբաժանում) և նրան հավասարեցված պաշտոններ

(ավագ խումբ)
Բաժանմունքի պետի տեղակալ (ոչ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում) և

(ավագ խումբ)

Ավագ օպերլիազոր և նրան հավասարեցված պաշտոններ

(միջին խումբ)
Օպերլիազոր և նրան հավասարեցված պաշտոններ

(միջին խումբ)
Դասակի հրամանատարի տեղակալ և նրան հավասարեցված պաշտոններ

(միջին խումբ)
Ենթասպաներով համալրվող պաշտոններ

(կրտսեր խումբ)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**

**վարչապետ Ն. Փաշինյան**